ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2026 թվականի N 1230 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1550-Ն ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 532-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 27-ի N 1550-Ն որոշման 3-րդ կետում «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունն է» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 27-ի N 1550-Ն որոշման N 1 հավելվածի՝

1) 23-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«23. Խորհրդի կազմում ընդգրկվում են պետական կառավարման համակարգի հետևյալ մարմինների ներկայացուցիչները՝ համապատասխան նախարարի առաջադրմամբ՝ ոլորտային իրավասության նախարարի տեղակալի մակարդակով, իսկ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի դեպքում՝ նախարարի մակարդակով.».

2) 23-րդ կետի 6-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել.

3) 23-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին ենթակետով՝

«6.1) առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին:».

4) 24-րդ կետի առաջին նախադասությունից հանել «կամ նրա առաջադրմամբ ոլորտային իրավասության փոխնախարարը» բառերը.

5) 25-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.

6) 37-րդ կետի 4-րդ ենթակետից հանել «առնվազն» բառը.

7) 54-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«54. Հիմնադրամի տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև հիմնադրամի անվանման փոփոխության, վերակազմակերպման, լուծարման և կանոնադրության փոփոխության, նոր խմբագրությամբ հաստատման մասին որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3, իսկ խորհրդի անդամի կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում տվյալ անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը՝ հոգաբարձուների խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով:».

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի ապրիլի 18-ի N 532-Ն որոշման 4-րդ կետում՝

ա. 6-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին ենթակետով՝

«6.1) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ